ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

22 հուլիսի 2021թ. **N 194-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ, ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ (ՄԱՆԴԱՏԻՑ ՀՐԱԺԱՐՎԱԾ) ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 100-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով և հիմք ընդունելով 2021 թվականի հունիսի 20-ին կայացած Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին մասնակցած կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի թեկնածուների կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված ինքնաբացարկի և մանդատից հրաժարվելու մասին դիմումները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1.Ուժը կորցրած ճանաչել

1) «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածուներ՝ Նիկոլ Վովայի Փաշինյանի, Արարատ Սամվելի Միրզոյանի, Լիլիթ Կամոյի Մակունցի, Սուրեն Ռաֆիկի Պապիկյանի, Ռոմանոս Վանիչկայի Պետրոսյանի, Արայիկ Էդուարդի Հարությունյանի, Անահիտ Թորգոմի Ավանեսյանի, Արմեն Սոկրատի Փամբուխչյանի, Դիանա Մնացականի Գասպարյանի, Գնել Հենզելի Սանոսյանի, Համբարձում Մամբրեի Մաթևոսյանի, Արամ Մայիսի Խաչատրյանի, Հովհաննես Ավետիքի Հարությունյանի, Արարատ Մխիթարի Գրիգորյանի, Դավիթ Հովիկի Գևորգյանի, Նարեկ Արշակի Մկրտչյանի, Հակոբ Կարապետի Սիմիդյանի գրանցումները,

2) Հայաստան դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածուներ՝ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի, Ալեքսանդր Սերգեյի Խաչատուրյանի, Մարիաննա Սամվելի Եփրեմյանի գրանցումները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**